ԺԲ· ՏԱՐԻ 3341 — (Ն· Տ·) 13 ԱՊՐԻԼ 1895 — 1 ԱՊՐԻԼ 1895 — 18 ՇԷՎՎԱԼ 1312 — ԱԻԱԳ ՇԱԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعليه‌ده غلطه‌ده آره‌ولك غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ
## ՕՐԱԳԻՐ
### Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|---|---|
| Կ. Պոլսոյ համար Տարեկան դահեկան արծաթ | 150 |
| » » Վեցամսեայ » » | 75 |
| » » Եռամսեայ » » | 40 |
| Օտար երկիրներ՝ Տարեկան Ֆրանք | 56 |
| » » Վեցամսեայ » | 28 |
| Ընծիր բուղթի վրայ մասնաւոր տպագր· Տարեկան Օսմ· Ոսկի | 2 |
| Գաւառաց բղթատարի ծախքը միորինակ | Ղրուշ 50 |

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր·

Les annonces sont reçues AUX BUREAUX DU JOURNAL

Ցառաջիկայ երկուշաբթի և երեքշաբթի Արեւելք չի հրատարակուիր Զատկական տօնին պատճառաւ։

## ԶԱՏԿԻ ԱՌԹԻՒ

Ապրիլի առաջին օրուան զուարթ ու պայծառ արեւը կուգայ աւետել կրօնքի այս մեծ տօնին՝ Զատկին հետ, բնութեան ալ մեծ տօնը, Գարունը։ Եւ այս գեղեցիկ զուգադիպութիւնը համակ խնդութեամբ կը լեցունէ ամեն անոնց սրտերը, որոնք ամբողջ շաբաթ մը եկեղեցի վազեցին ու կը վազեն՝ հաւատքի ներշնչումներով, ու յաջորդ եօթնեկին պիտի երթան վայելել դալար մարգերն ու առատուան սիւգը՝ մարմնապէս ալ կազդուրուելու, ինչպէս կազդուրուած էին հոգեւորապէս։ Բայց եթէ ձմեռը չեղաւ այնքան սաստկաշունչ, որ՝ հակադրութեան օրէնքով՝ կենսապարգեւ դարձունէր բնութեան զուարթնումը, Մեծ-Պահքը՝ իր դալուկ տխրութեան շուքը գիտցաւ պահել, ու կը պահէ մինչեւ այս իրիկուն, երբ ճրագալոյցի արարողութեան հետ աւարտէ իր քառասնօրէն։

Բսենք, անկեղծ ըլլալու համար, թէ Մեծ-Պահք ու Զատիկ, կեանքի արդի պայմաններուն ու բարքերուն մէջ, տակաւ առ տակաւ կը կորսնցունեն այն նշանակութիւնը զոր կուենային ատենօք։ Ամէնքս ալ, քիչ շատ յիշած ենք մեր հայրերուն աւանդութիւնները, ինչպէս անոնք ալ անոգգալաբար հրաժարած էին իրենց պապենական աւանդութիւններէն, ու օր օրի կը տկարանան, կեդրոն տեղերու մէջ մանաւանդ, ընկերային կեանքի ու ընտանեկան յարկի այն հին բարի սովորութիւնները որոնք ամբողջ հրճուանք մը ու երջանկութիւն մըն էին։ Հիմակ, երիտասարդը՝ գիտուն, գրագէտ կամ հարուստ, եւրոպական հով մը առած է որ զինքը հեռու կը պահէ իր եկեղեցիէն ու պըզտիկ տղան՝ փոխանակ իր տան կարմիր հաւկիթը փնտռելու, որ երկարատեւ հմայք մըն էր երբեմն մանուկներուն համար, ըղձալից նայուածքներ կուղղէ եւրոպական վաճառատան մը վանդակափեղկէն ներս, դիտելով արհեստական ու ոսկեզօծ հաւկիթները որոնք շաքարեղէն կը պարունակեն։ Եւ ծերունին, իր կծոտ քայլերով, այլեւս փոխած է իր ճանբան, ու աւագ շաբթուան մէջ դէպ ի սրճարանը կերթայ՝ նարտ խաղալու։ Կիները ու պանդուխտները ամենէն աւելի կը լեցունեն տաճարները. առաջինները՝ էն նըրացեալէն մինչեւ ռամիկը՝ բնածիր յատկութիւնն ունենալով բարեպաշտութիւնը վայելցնելու, ու վերջինները՝ իրենց երդիքին ու զաւկըներուն կարօտը նուիրական կամարներու տակ, խունկերու բոյրին ու աղօթքի մրմունջներուն մէջ գտնելու վարժուած։

Եւ բարեպարծութիւնն, որ այս տօնական օրերուն մէջ աւելի կը զօրանար ու կ՚արծարծուէր, անուն մը միայն մնացեր է, կըսանք ըսել։ Քանի՞ եկեղե-

…

Տ· Ա·

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԻՒՏՃԷՆ
### ՀԱՒԱՍԱՐԱԿՇՌԵԼՈՒ ՄԻՋՈՑԸ

Անգլիական երկու հանդէսներու (Լեդըզ Հօմ և Մըդըրըր Մոնթլի) հետեւողութեամբ՝ Փրանսացի հրապարակագիր մը շահեկան յօդուած մը հրատարակած է առօրեայ կեանքի նիւթական մասին վրայ, ուսկից օգտակար կը սեպենք քաղուած մը ներկայել մեր ընթերցողներուն։

Անգլիացիները որոնք իրենց հանրային ելեւմուտքը այնքան լաւ հաւասարակշռել…

…

Այս եղանակ պահանջելի է՝ հաշուակալներու ժողովուրդ մը կազմելու համար, և տարակոյս չկայ որ ատոնին ոնտեսագիտութեան մէջ մեծ ծառայութիւններ կրնայ մատուցանել։ Ենթադրենք մարդ մը որ իր գործերուն այնքան միայն զբաղած ըլլայ որ ժամանակ գտնէ մեծ տետրի մը վրայ արձանագրելու ատոնին ամենէն անուշան ծախքերը, կամ ատենադրուհի մը որ իր երեկոյթներուն մեծագոյն մասն իր հաշուակալութեան աշխատութեանց յատկացնելու գիւղացնութիւնն ունենայ. այս առօրեայ գործ անշուշտ պիտի բնծայէ խիղճի քննութեան մը ամեն օգուտները։ Աւելորդ ծախքերը, որք այնքան շատ կը մնային երբ հետք չեն թողուր, յաւէտ արձանագրուած պիտի մնան վաւերական տետրի մը մէջ և անզգաստ պիտի անցնին…

…

…համար մէկ կողմ դրուած տասներորդ մասէն զատ, ամեն տարի հարիւր Ֆրանքի չափ գումար մը կաւելնայ որ կը յատկացուի շամբանեա գնելու։ Երկու ամուսինները, դեկտեմբեր 31 ի իրենց ճաշը առատօրէն կառօգեն այս ըմպելիով, իրենց իմաստութիւնը վարձատրելու և իրենց տարին զուարթօրէն վերջացնելու համար։

### ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Գերմանիոյ վրայ գրուած Ֆրանսերէն բազմաթիւ գիրքերուն մէջ քիչեր կան որք այնքան դրական գաղափար մը տան գերմանական ներքին կեանքին վրայ որքան Պ. Ժան Պրըթոնի հրատարակած հատորը, Ծանօթ-ըն-Պէ-նէ ֆրանսացի ուսանողի մը է Գերմանիա։ Հեղինակը որ կեցած է ի Հայ-…

…

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի (80)

## ԷՔԹՕՐ ՄԱԼՕ

# ԸՆՏԱՆԵՕՔ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԷՆ ՊՍԱԿՈՒԱԾ

### ՀԱՏՈՐ Բ.

Վերջապէս ներկայացաւ Նպաստաւոր, քաղցր օր մը, կապոյտ մեղմ երկինքով մը, ինչպէս շատ անգամ կը պատահի այդ երկրին մէջ, և ճաշէն յետոյ Բիրրին հրաման ըրաւ Պասթիէնին՝ Բօքօն կիսակառքին լծել։

—Անմիջապէս, օրիորդ։

Աղջիկը զարմացաւ այս պատասխանին…

…

ՎԵՐՋ

